

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կես տարվանը 6 րուբլ:

Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիային խմբագրատան մէջ:

Ծառարարագրացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Маск»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ

(Բացի կիրակի եւ տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունելու է ամեն լիւրով:

Յայտարարութիւններ կ'ընդունուին միայն զմարտի 10-ին
կիրակեան օրը ընդհանրապէս 2 կոպեկով:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Մի հաղորդութիւն: Ներքին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Անգլիա: Թիֆլիս: Նամակ Գերմանիայէ: Արտաքին լուրեր: ՀԵՌԱՊՈՐՏՆԵՐ: ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ: ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Մօսկվայի հնագիտական ընկերութիւն:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ

Թիֆլիսում սահմանված է մի օժանդակող կոմիտէ առեւտրադրժական վիստավայի, այսինքն արեւստից հանդէսի, որ բացվելու է Մօսկվա քաղաքում այս տարի մայիսի 1-ին: Այս կոմիտէի վրա պարտաւորութիւն է դրված կովկասում բնակվող և հանդէսին իրանց առարկաները ուղարկել ցանկացող անձանց տալ հանդէսի մասին հարկաւոր տեղեկութիւնները, ապա տեղեկութիւններ առարկաներ ուղարկելու կարգի մասին և նոյն իսկ յանձն առնել առարկաներն ուղարկել հանդէսին:

Վասնորոյ, ի նկատի ունելով հանդիսի շուտով բացվելը, օժանդակող կոմիտէն հարկաւոր է համարում հրատարակելու հետեւեալ տեղեկութիւնները հանդիսին մասնակից լինելու և առարկաներն ուղարկելու ցանկացող անձանց համար:

1. Պարոններ ուղարկողները պարտ են առարկաներն ուղարկելուց առաջ ներկայացնել օժանդակող կոմիտէին երկու յայտարարութիւն ուղարկելու առարկաների մասին, իսկ իրանք առարկաները պէտք է ուղարկվին երեք ծանուցումներով (Ֆակտուրայով): Առարկաները չեն ընդունվի և չեն տեղաւորվի հանդիսի մէջ, եթէ ֆակտուրա չը լինի:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄՍՍԱԿԱՅԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

(Նիստ հինգերորդ, 18-ին փետրվարի)

Այս անգամ եւս մտադիր եմ ծանօթացնել ՄՍՍԱԿԻ ընթերցողներին Մօսկվայի հնագիտական ընկերութեան մէջ կարգացած կ'ոմս Ուվա րօվի ընթերցատի հետ—Եթէ ինչ տեղ է գտնվում հայոց հին մայրաքաղաքը—Արմաւիր—մի բարեխղճ և արժանի ուղադրութեան հետազոտութիւն, որ, յուսով եմ՝ հետաքրքրական կը լինի մեր բանասէրներին. մասնաւոր՝ նկատողութեան առնելով այն շարժումը ու տարաբաշխումը, որոնք վերջին ժամանակ սկսել են նկատվել հայերի մէջ Թիֆլիսի առաջնակայ հնագիտական ժողովի առթով և որոնք ցանկալի է աւելի իրական, աւելի շօշափելի հետեւանք ունենալին—Բայց առաջ քան ուսաց այս ակադեմիայի հնագէտի ընթերցումները հաղորդելը, ես աւելորդ չէի համարի մի հարկանցի հայեացք ձգել մեր պատմութեան վրա և երկու խօսք ասել Արմաւիրի մասին, որպէս զի աւելի հասկանալի լինի ընթերցողին այն մեծ նշանակութիւնը, որ կարող է ունենալ հայոց հնագիտութեան և պատմութեան համար այդ հին թագաւորանիստ քաղաքի

2. Առարկաներն ամբար պահուելու և հանդէսն ուղարկելու, նոյնպէս յետ դարձնելու ծախսը տեղութեան կողմից հաստատված հանդէսի կանոնադրութեան 5 և 20 յօդուածների համաձայն պէտք է լինի առարկաները հանդիսին ուղարկողների հաշուով:

3. Առարկաների ընդունվելը վիստավայի շինութեան մէջ կը սկսվի մարտ ամսի 15-ին և կը շարունակվի մինչև 1 մայիս:

4. Պարոններ ուղարկողները կարող են իրանց առարկաներն առաջադրել անձամբ անձին, կամ իրանց հաւատարմատարների (պովերէնի) ձեռքով, կամ յանձնել կարգաւորաւ և սահմանադրեալ վարձով հանդիսում զանվող մակէրին: Բայց որովհետեւ կովկասում բնակվողներից շատերը կարող են դժուարութեան հանդիպել իրանց առարկաները հանդիսին ուղարկելու վերաբերութեամբ, այդ պատճառով օժանդակող կոմիտէն միջնորդում է որ հանդիսում նշանակվին կովկասի ներկայացուցիչները, որոնք պարտաւոր կը լինեն հոգալ առարկաներն ընդունելու և հանդիսում տեղաւորելու մասին, նոյնպէս և պահպանել, առհասարակ, այն անձանց շահը, որոնք առարկաներ կուղարկեն հանդէսը:

Այդ պատճառով. Ա. կովկասի հիւսիսային կողմերում բնակվողները կարող են յարմար կերպով ուղարկել իրանց առարկաները ուղղակի հասցեով՝ Մօսկվայի առեւտրադրժական հանդիսի կովկասի բաժնի վարչութեանը: Բ. կասպից և Սև ծովերին մօտիկ բնակվողներին աւելի յարմար կը լինի առարկաները ծովով ուղարկել, նրանց ապէս նոյն հասցեով: Գ. իսկ կովկասի միացեալ բոլոր ուղարկողները կարող են

տեղը որոշել և այդ տեղում փորձածք և խուզարկութիւններ անել:

Արմաւիր անունը առաջին անգամ պատահում ենք՝ ըստ Խորենացու՝ 1975 թ. Քրիստոսից առաջ—Արմենակի որդի Արմայիսի ձեռքով յիշած կոմիտայ քաղաքի մի բլուրի վրա—Երասխի ափին: Գա առաջին և զբլիսաւոր քաղաքն էր հայոց, որ յետոյ եղաւ թագաւորանիստ՝ մինչև Հայկազանց իշխանութեան բարձումը: Այս քաղաքը բերեց քաջ Արմաւիր Մարգար պատմաբանի, առաջնորդ Նիւքարի և սրա բարձր պարիսպների աշտարակից կառնեց նրան՝ ի տեղի անցաւորաց և ամենայն եկելոց անդր—ինչպէս ասում է Խորենացին (Գ. Ա. զ. 13): Այստեղ էր գտնվում Արմանիկայ սօս և այս արեւմտայն անտառը, որի սաղարթների հեղիկ կամ սաստիկ սօսաւունքով հմայում էին հայոց հմայողները և գուշակները. այս անտառը նույն բնական տեղ էր համարվում և նրան ձգում էին երեւել անձանց. այսպէս՝ Արայի թոռ կարիճ Անուշաւանը նուիրած էր այդ սօսիներին: Այստեղ չինեց վաղաբաշխ Ա. (Քրիստոսից մօտ 140 տարի առաջ) փառաւոր մեհեան՝ *) հաս-

*) Արմանի է ուղարկութեան այն հանգամանքը, որ Քրիստոսից 3 դար յետոյ հայոց մեհեաններում (գոնէ Բագաւանում) յունաց աստուածների շարքում՝ կար և չորրորդական հոգը—ինչպէս ասում է Խորենացին (Գ. թ. զ. 77): Այսինքն՝ յունաց և պարսից կրօնական պաշտամունքը հատար ընդունելութիւն ունէին հայերի մէջ: Այս գուցէ մասամբ հետեւանք լինի այն համբերող (tolerant) քաղաքականութեան, որ մտցրեց հայերի մէջ վաղաբաշխ Ա.

ուղարկել իրանց առարկաները ուղղակի Թիֆլիս, օժանդակող կոմիտէի անունով, նրանց հետ միասին ուղարկելով ֆակտուրան, որքան պահանջվում է:

5. Տպագրութեան և ֆակտուրաներ և ամենայն տեսակ տեղեկութիւններ ստանալու համար, ինչ որ վերաբերվում է հանդէսին, ցանկացողները կարող են դիմել կովկասի օժանդակող կոմիտէին, որ գտնվում է կովկասեան արքունական կալուածների վարչութեան բաժնում գլխաւոր կառավարութեան մէջ, Թիֆլիս քաղաքում, Վէյսէն-հօֆի տանը, կաթողիկոս գերեզմանատան հանդէպ. Въ Кавказскій вспомогательный комитетъ Всерос. промышленно-художественной выставки.

ՆԵՐՔԻՆ ԼՈՐԵՐ

Այսօր, մարտի 10-ին քննվելու է Թիֆլիսի դատաստանական պալատում Ալեքսանդր Սելի-քովի դործը. որ մեղադրվում է բեժանովի սպանութեան մասնակցելու մէջ:

ՇՈՒՇՈՒՅ մեղ գրում են որ այդտեղի մի պարոն, Սիւնէն Հախումանց, շատ է աշխատում հրատարակել մի հայերէն ամսագիր «Գործ» անունով: Չը նայելով որ պարոնը իր ուսման ընթացքը աւարտել է էջմիածնի ձեմարանում, սակայն նա, ինչպէս երևում է, միշտ կը հարուածէ էջմիածնի անգործունէութիւնը, մասնաւոր այն ամենը որին ականատես է եղել ինքն:

Շուշուց մեղ հաղորդում են որ այդ քաղաքում ալիւրի պուրը արժէ այժմ 85 կոպէկ, իսկ գարին, պուրը 45 մինչև 50 կոպէկ: Այդ էժանութեան պատճառով մի քանի հարստահարութիւն տարվեցան մեծ քանակներ կրկն:

Ներսիսեան զպրոցի հոգաբարձութիւնը խըն-

դատելով ան գրի քաղաքում, լուսնի ինչ և իւր նախնաւոր. որպէս և մօտ 30 տարի յետոյ այստեղ բերել տուեց Արտաշէս Ա. Լիւդէպի երեսման յաղթելուց վերի պղնձաձայլ—ոսկեգօծ արձանները Արտեմիդի, Հերակլէի և Ապոլոնի, որոնցից վերջինին հայ քրդմապետները Վահագնի տեղ ընդունելով Արտաշէսի մահից յետոյ տարան դրին իրանց սեպհական գիւղը—Ալիւրիստ: Վերջապէս այս քաղաքում իւրաքանչիւր հայկազնի նահապետ կամ թագաւոր նորոգեց կամ շինեց իր արքունիքը և զարդարեց նրան զանազան շինութիւններով և արձաններով: Բացի դրանից այստեղ կար մեծ զաղթականութիւն հրէից, որոնց տեղաւորել էր Տիգրան երկրորդը՝ իր Պաղեստին արած յաջող պատերազմից յետոյ (Քրիստոսից մօտ 80 տարի առաջ) և որոնք կարող էին զգալի կերպով նըպաստած լինել մայրաքաղաքի արեւստից և արդիւնադործութեան ծաղիկուն: Այս բոլորից երևում է, որ Արմաւիրը եղել է մի շքեղ, հարուստ, բազմաշէն և բազմամարդ քաղաք: Եւ թէպէտ ժամանակից՝ արքայական աթոռ տեղափոխվեցաւ Արմաւիրից ուրիշ կենտրոններ, թէպէտ այս մայրաքաղաքի զարդերից և արձաններից չատկեր տարուեցան Բագրատ, Արտաշատ և Երևանը, թէպէտ ասում ենք՝ զարկեր յետոյ մեծ փոփոխութիւններ կրեց Արմաւիրը թէ թըշնամու արշաւանքներից և թէ երկրաշարժից և

Յայտնի է, որ սրա ժամանակ Հայաստանում բացի յունաց կրօնական պաշտամունքից և պարսից՝ որ անշուշտ ինքը հետը բերեց Պարսկաստանից, առանց հալածանքի զոյգվելու սենէր և հրէից կրօնը:

գրում է մեղ յայտնել որ հոգաբարձական խորհրդարանի մէջ մարտ ամսի 18-ին, երեկոյեան 8 ժամին, կը լինի ամբողջ, առանց կրկնաճրդի, կապալով տալու հանուցեալ Գրիգոր Շէրգիւի լեանցից ընծայած կրպակը իր նկարով, որ գտնվում է հայոց, նոյն է Միջի փողոցում: Պայմանաթուղթը (կօդիցիան) կարելի է կարգաւ հոգաբարձութեան դիւանատանը ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից, 10 ժամից մինչև 12 ժամ ցերեկվայ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՐԵՐ. Մեր քաղաքում զոյգութիւններն և սպանութիւնները շատացել են: Մի քանի օր առաջ թուրքերը Չանգու գետի մօտ մի մայրական կառավարին սպանել են և նրա կտուրը քշել փախցրել են: Իսկ երէկ գիշեր, մարտի 1-ին մի թուրք քաղաքի փողոցներում և երկու թուրք հրապարակական պարտէյի մօտ սպանված զանազան: Չարագործները անյայտ են:

Մեղ գրում են ՆԵՐՔԻՆ ԼՈՐԵՐ հետեւալը: Վերջին 28-ին երեկոյեան 7 ժամին Գայիանեան օրիւրական ուսումնարանի դահլիճում Երևանի քաղաքային բժիշկ Լեոն Տիգրանեանց դասախօսեց Երևան քաղաքի առողջապահական պալատաների վրա մի շատ բազմակողմանի և հետաքրքիր ծրագրով: Լսարանը լի էր ունիւրդիւններով, բոլորն էլ զոհ եղան և բուռն ծափահարութիւններով վարձատրեցին դասախօսին: Պ. Տիգրանեան շատ ձարտար կերպով էր խօսում, սրա խօսութիւնները էլ անում էր և ժողովրդի երեսին էր տալիս նրա առողջապահական անհոգութիւնները:

Մեղ հեռագրում են ՆԵՐՔԻՆ ԼՈՐԵՐ հետեւալը: Մարտի 6-ին քաղաքային դուստն քննելով այն հարցը թէ գիւնադիւրի շինութեանը յատկացած գետինը պէտք է ընդարձակել թէ ոչ, վճռել է աւելացնել այդ գետինը Կորգանովի հողի կտորը, գնելով նրանից՝ այդ գետինը և վճարելով նրան քաղաքային գանձարանից 3000 րուբլ: Այդ վճռեց յետոյ հաստատ էր եկող ուսումնական թիւի սկսած տեղիս գիւնադիւրի կընդար-

հարուստ վիժուկներից—այնուամենայնիւ՝ մենք հաւատացած ենք, որ նրանից պէտք է մնացած լինեն շատ ուշադրութեան արժանի նշաններ և յիշատակարաններ հին հայոց կեանքի, արեւստի ու ճարտարապետական, և անշուշտ մի օր այս բոլորը կը յայտնվի, եթէ հաստատ որոշվի Արմաւիր տեղը: Եւ միթէ կարող է բոլորովին անհետ լինել, չքանալ մի ամբողջ քաղաք, որ 2000 տարուց աւելի եղել է մի ազգի կրօնական, քաղաքական և ամենասական կենտրոնը:

Այժմ ես կ'անցնեմ կոմս Ուվարովի ընթերցմունքին: Թող ներգրամմա լինի ընթերցողը, եթէ ես մի փոքր մանրամասն խօսեմ զրա վրա, գոնէ հայոց հնագիտութեամբ հետաքրքրվողները՝ յուսով եմ, յաղկանալու չեն ինձ սրա համար:

Պ. Ատենարանը սկսեց իր խօսքը նրանից, թէ ինքը առաջ մտադիր է եղել ճանապարհորդել Անի քաղաքը և հետազոտել նրա աւերակները. բայց մեր դիւանական հայրենակից պ. Լեւոնը խորհուրդ է տուել նրան առայժմ թողնել այդ միջնադարեան՝ համեմատաբար—նոր՝ յիշատակարանները և խուզարկութիւն անել հայոց կառավարական հնութիւնները՝ իր հետազոտութիւնները սկսելով հայոց հին մայրաքաղաք—Արմաւիրից, որպէս ամենահին և հայկական կեանքի գլխաւոր կենտրոնից: Այս դիտարկութեամբ՝ կոմս ամենից առաջ սկսում է ուսումնասիրել Արմաւիր տեղը: Բայց հենց առաջին քայլում նա պատահում է արգելքների. Արմաւիր մայրաքաղաքի տեղը իւրաքանչիւր աշխարհացոյց կամ ճանապարհորդ այնպէս է ցոյց տալիս: Օրինակ՝ Գիւլիստան, որ եղել է Հայաստան

ձակվի և եղած չորս դասաւանդին կաւելացվի չինգերորդ դասաւանդին»:

ԴԵՐԲԵՆԴԻՑ մեզ գրում են որ փետրվարի 18-ին այդ քաղաքի հայ թատերականները ներկայացրին «Բեթսեբա» և «Փարիզի կոշիկակար» պիէսաները: Ներկայացումն շատ անող եղաւ: Գէրբէնդում թատերական գործը առաջ տանելու վրա կանայք աւելի են հոգում քան թէ արամարդիկ: Թղթակիցը մեծ չնորհակալութիւն է յայտնում տիկին Աստուածատուրեանցին և Գրիգորեանց ու Սառաջեանց օրիորդներին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԱՆԳԼԻԱ

Անգլիական պատգամաւորների ժողովում մարտի 3-ին, իրանդիայում գէնք պահպանելու մասին առաջարկված բիլլի երկրորդ ընթերցանութիւնն էր կատարվում: Գլխավորումն ուղեորված ծափահարութիւններով ողջունեցին, որովհետեւ նա բաւական ժամանակ էր յաճախում նիստերին հիւանդութեան պատճառով: Իր լանդական պատգամաւոր Գիլլոն յարձակվեց ներքին գործերի մինիստր Զարիօրտի վրա, մեղադրելով նրան այն բանի մէջ, որ նա «ցած կերպով» վերաբերեց իր անձնական բարեկամ Ջոն Գէֆօնին: Գիլլոն մի և նոյն ժամանակ կրկին իր խորհուրդը իրանդացիներին՝ զենաւորվել, աւելացնելով, որ եթէ ինքն արեւդատու լինէր, ատրճանակով կը սպանէր նրանց, ով որ կը համարձակվէր վարձված հողից դրան արտաքսել: Իրանդացիների հետ այնպէս վատ են վարվում, որ նրանք պէտք է զինաւորված ապստամբվէին, եթէ որ միջոցներ ունենային, բայց գեղադրաբար միջոցներ չունեն:

Սպիկերը կարգի հրաւիրեց Գիլլոնին, սակով որ նա քանդում է պարլամենտական կարգերը, քարոզելով ներքին պատերազմ: Գիլլոն յետ առաւ իր խօսքերը: Մինիստր Զարիօրտ ժողովի ուշադրութիւնը դարձրեց իր գալի քարոզած մտքերի վրա: Անգլիան այժմ հասկանում է, աւելացրեց նա, որ լիզան քարոզում է պետական դաւաճանութիւն և սպանութիւն: Գիլլի մի քանի անգամ կարգի հրաւիրվեցաւ նրա

նում 1834 թ., հաստատում է, թէ ինքն տեսել է Արմաւիրի աւերակները և այն բոլորը, որի վրա շինած է եղել քաղաքը: Այդ աւերակները են՝ կիսաքանդ ամրոց, կառաչէն տների հետքեր և մի քանի բնակոյններ: Իսկ երեւելի հայազէտ Սէն-Մարտէնը բոլորովին ուրիշ տեղ է ցոյց տալիս Արմաւիրը: Այնպէս որ Հերմանը արդարացի դարձանք է յայտնում այն տարբերութեանը, որ նկատվի է Դիւբուաի և Սէն-Մարտէնի նշանակած տեղերի մէջ: Վերջինի սակով Արմաւիրը եղել է աւելի արեւմտաք: Սիւրմաւուրից մի փոքր հարաւ Արաքսի աջ ափի վրա: Միւս կողմից՝ Անդրկովկասի 5 վերստանոց քարտեզը և Սիմէոնովի յայտնի աշխարհագրական բաւարարմը մասամբ համաձայն են Դիւբուաի ցոյց տուած կէտին, նշանակելով Արմաւիրի տեղը Շահրեարի, Կուրդուգուլուի և Կուրդուգուլուի (?) մէջը՝ Արաքսի ձախ ափի վրա: Արանից երեւում է, որ Ուլարովը մանաւանդ պէտք է աշխատել Արմաւիրի տեղը հաստատ որոշել և յետոյ արդէն յիշատակարաններ և զանազան հնութիւններ հետազոտել:

Կոմիտի անելով Արմաւիր (նթադրեալ) տեղը ձևացնում է մի հարթ, կրաքար դաշտավայր, կոնաձև բլրակներով ծածկած, որոնք, պ. Ատեհաբանի կարծիքով, (մի և նոյնը նկատել է և Դիւբուան) անշուշտ գոյացել են հրաբուխի փոշիներից: Շահրեար, Կուրդուգուլու և Կուրդուգուլու գիւղերի մէջ գտնված բլուրը, ինչպէս տեսանք, ունէր զանազան աւերակների բնկորներ: Այդ բլուրը շրջապատած է 4 կամ 5 շարք պատերով: Պատերը՝ արտաքին կողմից—շինված են անագին քաւակուտի քարերից, կանոնաւոր

համար, որ նա մեղադրում էր Զարիօրտին սուտ խօսելու մէջ: Բանը նրանով վերջացաւ, որ սպիկերը զրկեց նրան խօսելու իրաւունքից նստի մնացած ժամանակը, նախադահի իշխանութեանը չը հնազանդվելու պատճառով: Այդ վճիռը հաստատվեցաւ 233 ձայների մեծամասնութեամբ 15-ի դէմ:

ԹԻԻՐԻՔԻԱ

«Բէյութեր» ընկերութեանը հեռագրում են Կ.Պոլսից հետեւեալը: Կ.Պոլսի վերադառնալուց յետոյ կոմս Զաքարիա, որ առաջին անգամ տեսնվեցաւ սուլթանի հետ, ասաց, որ խաղաղութիւնը պահպանելու համար անհրաժեշտ է բաւականացնել Յունաստանի պահանջներին: Սուլթանը հիմնաւոր համարելով գերմանական դեսպանի առաջարկութիւնները, խոստացաւ հաղորդել դեսպաններին այն նոր սահմանագիծը, որ Թիւրքիան կարող է ընդունել: Արտաքին գործերի մինիստր Ասիմփաշա ինքը պէտք է յայտնէր դեսպաններին նոր սահմանագիծը, բայց մինչև այժմ նա չէ այցելել պետութիւնների ներկայացուցիչներին: Թիւրքացի մինիստրների խորհուրդը դեռ ևս ոչինչ վճիռ չէ կայացրել յոյն-թիւրքական սահմանների վերաբերութեամբ: Պետութիւնների ներկայացուցիչները այն կարծիքի են, որ գործը կարող էր խաղաղ վախճան ստանալ, եթէ Անգլիան գործ դնէր իր բոլոր ազդեցութիւնը Յունաստանի վրա և յետ պահէր նրան պատերազմական գործողութիւնների սկսելուց: Այստեղ լուր է տարածված, որ Գերմանիան մտադիր է առաջարկել Սպառնայի մասնակցութիւնը, եթէ մի նոր կոնֆերանցիս հարկաւոր լինի յոյն-թիւրքական վեճը լուծելու համար:

Կ. Պոլսից գրում են «Polit. Corresp.» լրագրին: Գերմանների խորհուրդները լիւնում են իտալական դեսպանատան մէջ: Առաջին ժողովի ժամանակ դեսպանները հաղորդեցին միմեանց այն հրահանգները, որոնց համեմատ նրանք պէտք է գործէին: Ցայտնվեցաւ, որ այդ հրահանգները միատեսակ էին և զանազան ձևով խմբագրված: Գրանց համեմատ դեսպանները ներկայացրին Բ. Գրանը իրանց գրութիւնները, որոնց

չարած և հարթ տաշած. բայց այդ քարերը այնպէս են միացրած միմեանց հետ, որ նրանց մէջը մնում է երկու մասի հաստութեամբ: Խոլովակաձև միջոց—այնպէս, ինչպէս անհաստալով շինում են այժմ Անդրկովկասի շատ քաղաքները: Ներքին կողմից պատերի շինութեամբ մի և նոյնն է, միայն քարերի տաշութեամբ աւելի անհոգութեամբ է կատարած: Այդ արտաքին և ներքին պատերի մէջը լցրած է կրով, աւաղով և ցամաքած Արաքսի յատակից բերած մանր քարերով: Հէնց այստեղն է, որ Դիւբուան Արմաւիր է անուանում և որ գործը վրա է ցածրած Արաքսից 1 1/2 վերստ, Արաքսից 5 վերստ և Էջմիածնից 25 վերստ հեռաւորութեամբ: Բայց խնդիրը այն է, որ այս պատերը համեմատաբար նոր շինութեան են, որովհետեւ պ. Ատեհաբանի սակով, ինչ ժամանակները (թէ յոյները, թէ հռոմայեցիք և թէ շատ արեւելեան ազգերը) պատերը շինում էին առհասարակ առանց մէջը լցնելու՝ միայն երկու կողմից (ներսից ու դրսից) ամբողջ քարեր չարկելով, իսկ մէջը լցրած պատերը սկսան երկել միայն 2-որդ դարում Գրիգորոսից յետոյ: Արանից յետոյ կոմս Ուլարովը փորում է բլուրի ստորոտը: Ցայտնի է, որ թէն քաղաքները զանազան պատճառներից թանգվում կործանվում են, երբեմն էլ բոլորովին ծածկվում հրաբուխի փոշիով: (Ինչպէս իտալիայում Պոմպէյ և Հերքուլանում քաղաքները), բայց քաղաքը երբեք չէ կարող անհետանալ, կորչել այնպէս, որ նրանից հետո չը մնայ: Այդ բոլոր կործանիչ պատճառներից յետոյ դարձեալ մնում են նրշաններ, նշոյններ—երբեմն ամբողջ շարք յիշա-

րովանդակութիւնը մօտաւորապէս հետեւեալն է: Պետութիւնները յոյս են յայտնում, որ Թիւրքացի կառավարութիւնը կը պահպանի իր խոստմունքը և պատերազմական գործողութիւններ չեն սկսի Յունաստանի դէմ: Գրութիւնների մէջ ասված է, թէ պետութիւնները ի նկատի ունենալով, որ Բ. Գրանը զիջումներ կանի Յունաստանին, յանձնեցին իրանց դեսպաններին բանակցել Բ. Գրանի յետ և նպատակ յոյն-թիւրքական վեճի խաղաղութեամբ վերջանալուն:

Այդ գրութիւնները Բ. Գրանը յանձնելուց յետոյ, դեսպանները դիմեցին իրանց պետութիւններին խնդրելով, որ նրանք բոլոր միջոցներ գործ դնեն, որպէս զի Յունաստանը պատերազմական գործողութիւններ չը սկսի: Այդ խնդրերը անհրաժեշտ դարձաւ, որովհետեւ Յունաստանը ծառայութեան հրաւիրեց պահպանի գործերին: Բայց այդ սուլթանի պալատի մէջ պատերազմական մի խորհուրդ կայացաւ, որ, գործին պատերազմական տեսակետից նայելով, վրձուց աւելի զիջումներ չանել, քան թէ խոստացված էր հոկտեմբերի 3-ի շրջաբերականի մէջ: Կ. Պոլսի մէջ պատերազմական պատրաստութիւններ են տեսնվում և դրանք աւելի մեծ չափով են կատարվում, քան թէ ուսուլթիւրքական պատերազմից առաջ, որովհետեւ Թիւրքերը այն կարծիքի են, որ նոր պատերազմին պետութիւնները կը միջամտեն և Թիւրքիան պէտք է պատրաստ լինի: Գրանական պակասութիւնը արդեւք է դնում պատերազմական պատրաստութիւններին: Շատ տեղերից հաղորդում են, որ պատերազմական պաշարներով բեռնաւորված նաւերը անկարող են հեռանալ նաւահանգիստներից քարածուխի պակասութեան պատճառով: Ամերիկայի զինագործարաններին մեծ պատուէրներ են տրւած: Ոչ թէ միայն Թիւրք գնեւորայնները, այլ և զանազան դեսպանատների պատերազմական գործակալները այն կարծիքի են, որ Թիւրքացի զօրքերը ամեն բանով գերազանցում են յունական զօրքերին: Թիւրքացի կառավարութիւնը մտադիր է Էպիրոսի և Թէսալիայի մէջ եղած իր զօրքերի թիւը հասցնել 110,000: Այս հանգամանքները ի

տակարանների բոլորովին անհոգ—մնում են նշը խարներ անցած գնացած կեանքի, անցած գնացած արուեստի ու ճարտարագիտութեան: Այդ նշխարներ ու նշոյններ պահողը՝ հողն է, որ մի քանի արշին կամ սաժէն խորութեան մէջ ամփոփում է ամեն բան: Հողի այդ իսկ չեղքը, որ հնազանդները կոչում են Կոչուս և նրա անուանում, ձեռք է դարձրել Ուլարովը հետազոտելու: Կուրդուգուլու չեղքը այստեղ ինչպէս յայտնվեցաւ՝ 1/2 արշինաչափ է. կոմսը բաց է անում պատեր, պարիսպներ, թմբակներ—առանց մի նշանակութեան հնազոտութեան համար: Մինչև անգամ այդտեղ դուրս է գալիս բլուրի մի ամբողջ խանութ՝ հարկաւոր կուէ ամաններով (բղձուղներով). բայց դրանք բոլորեքեան շինած են նոր ձևով ու ճաշակով, առանց որ և է հնութեան նշանի կամ ակնարկութեան: Թողնելով այս բլուրը և նրա ստորոտը՝ Ուլարովը իր հետազոտութիւնները տեղափոխում է մօտակայ քարձրութեան վրա. և արդարեւ՝ այստեղից նա հանում է մի քանի իրեղէններ, որոնք ապացուց են խորին հնութեան—օրինակ՝ քարեղէն զէնքեր, քարէ դանակներ և այլն—ամենահին ձևերով: Չը բաւականանալով այս մի քանի կտոր նախ-պատմական յիշատակների բնկորներով, կոմսը սկսում է հետազոտել դաշտավայրը, որը ինչպէս վերը յիշած էր ծածկված է հրաբուխի վիժման աճիւնով: Այդ աճիւնը կամ մսիլը շատ օգտաւէտ է հողի պարարտութեան համար և տեղացի բնակիչները հասկանալով այդ, ժողովում և անում են իրանց արտեր պարարտացնելու: Այստեղ կոմսը՝ կուրդուգուլու չեղքը քննելու համար փո-

նկատի առնելով, շատերը կարծում են, որ դեսպանները բանակցութիւնների ժամանակ մեծ դժուարութիւնների կը հանդիպեն:

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

Բերլին, փետրվարի 26

Այս տարի ես մեղաւոր եմ «Մշակի» առջև, որ առաջին երկու ամիսների ընթացքում միայն մի թղթակցութիւն կարողացայ ուղարկել: Պատճառն այն է որ շատ զբաղված էի: Բացի սովորական աշխատանքներից, զբաղված եմ այժմ Կովկասեան քարերի ժողովածուի հետազոտելով ու որոշելով և ուրիշ կողմից իմ աշակերտների մասնակցութեամբ մի քանի նոր հետազոտութիւններ ենք անում, որոնց մասին իմ լաբորատորիայից շուտով հրատարակվելու է մի շարք բրոշյուրների: Այդ բոլորը ինձանից շատ ժամանակ է խլում:

Այսօր ունեմ մի քանի լուրեր հաղորդելու, բայց նախ իմ ուղարկութիւնս եմ յայտնում «Մշակի» այս տարվայ աշուղութեան համար: Ուրեմն «Մշակը» երկու ամսվայ ստորագրութիւնից յետոյ հասել է այս տարի բաժանորդների այն թիւին, որին հասել է անցեալ գրելթէ ամբողջ տարվայ ընթացքում: Նա, ուրեմն, հաստատ հիմքի վրա է կանգնած, նա անհրաժեշտութիւն է ճանաչված, նա օրգան է դառնում հասարակութեան այն մասի, որ դէպի առաջ է ձգտում, որին պատկանում է ապագան:

Վերջին ժամանակները Բերլինի այլ և այլ շրջաններում ես առիթ ունեցայ ծանօթանալ մի քանի անձնութեան հետ, որոնք նշանաւոր են այստեղի թէ գիտութեան և թէ քաղաքական կեանքի մէջ, մանաւանդ դեր են խաղացել հրէական հարցի մէջ: Կալիստոս, իմ կողմիցս էլ, մի քանի ընդհանուր գծերով ծանօթացնելով ընթերցողներին այդ անձնաւորութիւնների հետ:

Առաջինն է պատգամաւոր Հէնէլ (Hänel) որ մանաւանդ այդ վերջին ժամանակ հռչակվեցաւ իբրեւ հակասեմիտական շարժման հակառակորդ և հրէաների իրաւունքների պաշտպան: Նա իր բոլորով պարլամենտի մէջ սակայն կառավարութեանը բացարձակ յայտնել այն դիրքը, որ նա պիտի բռնի հակահրէական շարժման սեջ: Հէնէլ շատ խիստ կերպով է ջրնադատում կառավարութեան կողմից բռնած չէզոք դիրքը, բայց մանաւանդ հրէաների իրաւունքների թշնամիներին:

Երկրորդ անձնաւորութիւնն է յայտնի գանիացի Բրանդէ (Brandes) որ ինքն հրէայ է և որ պաշտատեան քարոզիչ Շաֆօկիէի կողմից անասելի յարձակումների ենթարկվեցաւ: Իր ազատամիտ ուղղութեան առիթով, Բրանդէս

բել է տալիս մի անագին փոս 3—4 սաժէն երկաշուրթեամբ, 8 արշին լայնութեամբ և 3 արշին խորութեամբ և դէմ է առնում ցամաքած գետի յատակին, որ հաւանական է Արաքսի ձախվելուց չէ գտնուում: Բայց դարձեալ բաւական չը համարելով իր բոլոր արած փորձերը, Ուլարովը դիմում է մի քանի բլրակների 1 արշին կամ 1 արշին 4 վերջով քարձրութեամբ. սակայն այստեղից էլ մի ուշադրութեան արժանի բան չէ դուրս գալի, բայց թմբակներից և մի ամբողջ շարք բլուրներից: Պ. Ատեհաբանը գրաւիչ կերպով պատմում էր, ինչպէս թմբակում էր իր սիրտը ամեն անգամ, երբ զանազան կաւամաններ էին դուրս հանում փոսի միջից. նա ասում էր. «Շլիմանի պէս ես էլ իսկոյն վաղում էի բղուղի մօտ և չտապաւ ձեռք տանում մէջը, յուսալով նրա յատակում գտնել հալկական հին կեանքի և արուեստի նշաններ, բայց ապաստ, որ Շլիմանի *) նման ես բաղդաւոր չէի, բլուրները միշտ զորակա էին լիւնում...»: Կոմս Ուլարովը այստեղ էլ չէ յուսահատվում բոլոր անաշուղթութիւններից. դեռ անշարժ մնում էր մի ամբողջ շարք գերեզմանների և նա ձեռնամուխ է լինում նրանց խուրդարկութեան: Այդ գերեզմանները գտնվում են վերը յիշած բլուրից դէպի արեւելք. մի քանիսը նրանցից կազմում են 3/4 արշին խորութեամբ հասարակ փոսեր, առանց որ և է պատրաստութեան, և՛ ինչպէս երեւում է, գլուխների դէպի

*) Ներկայ դարու յայտնի հնագէտ և Տրովադայի շատ հնութիւնները գտնող:

